# ԱՐԱԳԱԾԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՀՀ Արագածոտնի մարզի «Արագածի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ՝ հանրահաշվի, երկրաչափության (7 դասաժամ), աշխարհագրության (1.7 դասաժամ) եւ ֆիզիկայի (5.5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը տպագրվում է ստորեւ (տե՛ս՝ Ի ԼՐՈՒՄՆ):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ սեպտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:


ԱՐԱԳԱԾ ԱՇԽԱՐՀ

ՀԱՏՈՒԿ ԹՈՂԱՐԿՈՒՄ

Գլխավոր խմբագիր
ՎԱՐԴԵՎԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Լրատվական գոր
«ԱՐԱԳԱԾ Ա
Գրա
N՝ 02 Ա
Ծավա
Su

ԱՐԱԳԱԾ ԱՇԽԱՐՀ

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 26-ին՝ ժամը 12:00-ին, Արագածի արհեստագործական պետական ուսումնարանում. հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Ծաղկահովիտ համայնք, Զորավար Անդրանիկի փողոց, շենք՝ 4:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 093 33-33-17: